ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2026թ. N _____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Ձևավորում և սպասարկում» համայնքային համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է «____» ____ 2026 թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Երևանի քաղաքի ավագանու

_____._____ 2026 թ.

թիվ _____ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
«11» 07 2023թ.

գրանցման համար՝ 286.215.1329298

հարկ վճարողի հաշվառման համար՝
0289618

«11» 07 2023թ. գրանցված
կանոնադրության
թիվ 1 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«_____»_____ 2026 թ.

Աշխատակից՝

_____
_____

«ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

«Ձևավորում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Կանոնադրության 2.2. կետի 3-րդ ենթակետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

- ավտոբուսների կանգառասրահների և բիոզուգարանների տեղադրումը, տեղափոխումը, ինչպես նաև սպասարկումը:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է պետական ռեգիստրում 11.07.2023թ «Ձևավորում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մինչ այժմ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ն իրականացրել է Երևան քաղաքում տեղակայված կանգառասրահների և տրանսպորտի վերջնականգառներում տեղադրված բիոզուգարանների սպասարկումը:

Հաշվի առնելով «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի լուծարման փաստը՝ անհրաժեշտ է Երևան քաղաքում տեղակայված կանգառասրահների և տրանսպորտի վերջնականգառներում տեղադրված բիոզուգարանների սպասարկման հետագա գործառույթները փոխանցել «Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ-ին, ինչը էական նշանակություն ունի գործառույթների հետագա սպասարկման շարունակականությունն ապահովելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել հաստատել Երևանի ենթակայության «Ձևավորում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ